ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Հարգելի տիկին Հայրապետյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2023 թվականի նոյեմբերի 03-ից մինչև 2024 թվականի փերտվարի 02-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

✓ ուսումնասիրել եմ պետական վերահսկողության և վարչական վարույթներին առնչվող կազմված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, թերությունները և խնդիրները, իրականացրել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրություն:

Հայտնաբերել եմ հետևյալ թերությունները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ խախտումը չի նկարագրվում կամ անորոշ է նկարագրվում, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է լիազոր անձի անունով, մինչդեռ լիազորված անձը պատասխանատու անձ չէ, քանի դեռ հրաման չկա, իրավունք ունի միայն ստորագրելու, հարցերի շրջանակից դուրս հարցեր են ստուգվում և որպես խախտում արձանագրվում, ինչը արգելվում է, ծանուցման մեջ այն ստանալու օրը չի նշվում, ինչը պարտադիր պետք է նշվի պատշաճ ծանուցում ապահովելու համար, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ պետք է նշվի անհատ ձեռնարկատեր է, թե ֆիզիկական անձ և համապատասխանաբար նրանց տվյալները, սակայն չի նշվում, արձանագրության մեջ պարտադիր պետք է նշվի, որ հրաժարվել է ստորագրելուց, եթե հրաժարվում է, ինչը ապահովում է արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմելու օրենսդրական պահանջը, սակայն չեն նշում, վարույթի իրականացման ժամկետները չեն պահպանվում, 30 օրը, արձանագրությունը պետք է ստորագրի տնօրենը, բայց ստորագրել է ընկերության կողմից լիազորված անձ, ոչ թե տնօրենի կողմից լիազորված անձ, ստուգման ակտի հիման վրա զեկուցագիր չի գրվել անձանց աշխատանքի չթույլատրելու մասին, ստուգման ակտի նախագիծը կազմելու ժամկետի խախտում, արձանագրության մեջ նշվել է, որ ստուգումն իրականացվել է Երևանի կենտրոնի տեսուչների կողմից, սակայն ստուգումն իրականացվել է Կոտայքի մարզային կենտրոնի տեսուչների կողմից, ստուգմանը մասնակցել է հրամանում չնշված անձը, հանձնարարականի օրինակը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին տալու ապացույցը բացակայում է, հանձնարարականի ժամկետը սխալ է նշված, հրամանը ստուգումը սկսելուց 3օր առաջ տնտեսավարող սուբյեկտին չի ծանուցվել նյութական պահուստի դեպքում,

վարչական իրավախախտումների հոդվածները արձանագրության մեջ, ստուգման ակտում և ակտի նախագծում երբեմն սխալ են նշվում: Վճռաբեկ դատարանի նախադեպերը վերը նշված խախտումների մասով հետևյալն են՝ վարչական իրավախախտման կազմմանը ենթադրյալ իրավախախտի պարտադիր մասնակցություն, վարչական ակտի հիմնավորվածություն:

✓ ներկայացնում եմ հետևյալ առաջարկությունները՝ հանձնարարել մարզային կենտրոնների ղեկավարներին իրենց գործառույթների շրջանակում կազմակերպել նշված թերությունների վերացումը՝ վերը նշված խախտումները ներկայացնել տեսուչներին, կազմակերպել վերապատրաստում տեսուչների համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

05.02.2024թ.